ԿԻՐԱՌԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ք. Երևան «17» 06 2025թ.

«ԿԻՐԱՌԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄԸ *(այսուհետ՝ Համալսարան, գրանցման համար՝ 222.160.778251, գրանցման վկայական՝ 03 Ա 928251, ՀՎՀՀ՝ 02620388)* ի դեմս ռեկտոր Վահե Թորոսյանի,

«ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ» *(այսուհետ՝ Քոլեջ)* ի դեմս տնօրեն Նիկողոս Գասպարյանի, մյուս կողմից

Հիմք ընդունելով՝

Կրթության բնագավառում փոխգործակցության և գործընկերային հարաբերությունների հաստատման և ամրակայման, միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական կրթության կապի խորացման, կրթության շարունակականության ապահովման, համատեղ կրթական, մշակութային ծրագրերի և միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը

Առաջնորդվելով՝

Կրթության բնագավառի համընդհանուր սկզբունքներով ու կարգավորումներով, ինչպես նաև միջազգային և ներպետական փորձի լավագույն ավանդույթներով՝ կնքեցին սույն համագործակցության հուշագիրը հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Հուշագրի առարկան հանդիսանում է Կողմերի միջև գիտակրթական և կրթամշակութային փոխգործակցության ձևավորմանն ու հետագա խորացմանն ուղղված հարաբերությունները:

1.2. Սույն Հուշագրից բխող պայմաններով և կարգով Կողմերը ձեռնամուխ են լինում գործադրել լավագույն ջանքերը սերտ համագործակցության կայացման համար, ***խրախուսել կրթության շարունակականությանը, Քոլեջի սովորողների հետագա ուսումնառության և մասնագիտական կողմնորոշման իրականացմանը***՝ այդ կերպ ամրակայելով հայրենական իրականության մեջ առկա ՄՄՈՒՀ-ԲՈՒՀ կապի լավագույն ավանդույթները:

2. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Քոլեջի բարձր առաջադիմությամբ ավարտած շրջանավարտները իրավունք են ստանում սովորելու Համալսարանի նույն կամ հարակից մասնագիտության երկրորդ կուրսում՝ ՀՀ օրենսդրությամբ և Համալսարանի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

2.2. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ և պայմանավորվածությամբ հանձնառու են ներկայացուցչական մասնակցություն ապահովել կազմակերպվող միջոցառումներին, կրթական սեմինարներին, կլոր-սեղան քննարկումներին և այլն:

2.3. Կողմերը նպաստում են կրթական հարթակներում լուսաբանելու համատեղ անցկացվող ծրագրերը:

2.4. Կողմերը նախապես համաձայնեցված ժամանակացույցին համապատասխան կարող են փոխադարձ շրջայց կատարել՝ նպաստել Քոլեջի սովորողների մասնագիտական կողմնորոշմանը և ճիշտ ուղղորդմանը:

2.5. Համալսարանը կրթական ծրագրերի և ուսումնառության պայմանների ներկայացման նպատակով Քոլեջի սովորողների համար կազմակերպում է բաց դռների և մասնագիտական կողմնորոշման օրեր՝ նախապես համաձայնեցված ժամանակացույցին համապատասխան:

2.6. Կողմերի համաձայնությամբ դասավանդողների և վարչական անձնակազմերի համար կարող են կազմակերպվել վերապատրաստման դասընթացներ, բանախոսություններ, վարպետաց դասեր, մրցույթներ, օլիմպիադաներ՝ նախապես համաձայնեցված ժամանակացույցին համապատասխան:

2.7. Սույն Հուշագրի շրջանակներում Կողմերն իրավունք ունեն համատեղ մշակել և հրապարակել կրթության և գիտության ոլորտին առնչվող աշխատություններ, դասագրքեր, ուսումնամեթոդական նյութեր և այլն:

3. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

3.1. Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման և կնքման պահից և գործում է անժամկետ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Բոլոր այն հարցերը, որոնք չեն կարգավորվել սույն Հուշագրով, կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2. Սույն Հուշագրի հետ կապված բոլոր վեճերը լուծվում են Կողմերի փոխհամաձայնության միջոցով և բանակցությունների ճանապարհով:

4.3. Սույն Հուշագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, այդ մասին ուսումնական տարին սկսելուց առնվազն երեք ամիս առաջ գրավոր ծանուցելով մյուս կողմին:

4.4. Սույն Հուշագիրը կազմված է հայերենով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հասցե՝ Մ.Հերացի 2

Ռեկտոր
ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ

_____
(ստորագրություն)

ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

Հասցե՝ Գեղարքունիքի մարզ,ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան 19

Տնօրեն
ՆԻԿՈՂՈՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ

_____
(ստորագրություն)